ԷՋԵՐ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ԱՐԵՒԵԼՑԻ

ԺԳ. դարը հայ եկեղեցական երաժշտութեան պարզեւում է մի վաստակաւոր երաժիշտ: Դա իր ժամանակի համբաւաւոր գիտնական, «իմաստուն եւ հանճարեղ» մշակ Վարդան վրդ. Արեւելցին է, որի ծննդեան վայրը մինչեւ օրս էլ յայտնի չէ: – Նրա Արեւելցի կոչումից երեւում է, – գրում է տաղանդաւոր բանաստեղծ Մանուկ Աբեղեանը, – որ նա Արեւելեան Հայաստանից է եղել, հաւանօրէն Գանձակ քաղաքից կամ նրա շրջականներից. ծնուած է մօտ 1200–1210 թուականների մէջ:

Ուսել է նա նշանաւոր եւ արդիւնաշատ հեղինակ Յովհաննէս Վանական վարդապետի մօտ եւ աշակերտակիցն է նշանաւոր պատմագիր Կիրակոս Գանձակեցու:

Վարդան վարդապետի կեանքի պատմութեան էջերը նշում են, որ նա երկար թափառում է զանազան վանքերում: Ուխտի է գնում նախ Երուսաղէմ, վերադարձին մտնում է Կիլիկիա եւ մի որոշ ժամանակ ապրում հայոց Հեթում արքայի եւ նրա եղբայրների մօտ: Ապա անցնում է Հռոմկլա՝ Կոստանդին կաթողիկոսի մօտ, որ նրան տեսնելով՝ շատ է ուրախանում. «... Զոր տեսեալ, ուրախացաւ յոյժ, եւ առ իւր պահեալ յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա եւ զի ոչ կամէր երբեք մեկնիլ ի նմանէ»: Հայոց կաթողիկոսը նրա ձեռքով շրջաբերական թուղթ եւ եկեղեցական կանոններ է ուղարկում Հայաստանի քաղաքները, աւաններն ու վանքերը եւ երեւելի իշխաններին: Այնուհետեւ, 1246 թուին, նրան տեսնում ենք Կայանոյ. «Եւ ինքն եկեալ ի Կայանոյ ի միայնարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, եւ անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որ աշակերտէին նմա, վարդապետական բանին»(*): Այնուհետեւ նա շրջում է մի շարք մենաստաններ – Խորվիրապ, Թեղենեաց վանք, Սաղմոսավանք, Հաղբատ, Հառիճոյ վանք, Աղջոց վանք, որոնք իրենց մշակութային կեանքով նրա վրայ խոր տպաւորութիւն են թողնում:

Ուշագրաւ է այն, որ նրա համբաւը, որպէս լաւագոյն մանկավարժի եւ գիտնականի, ամէն տեղ տարածւում է եւ ամէն կողմից նրա մօտ գալիս են բազմաթիւ ուսումնատենչ ուսանողներ եւ գիտութեամբ ու գրականութեամբ պարապում: Նրա լաւագոյն աշակերտների շարքում ուրոյն տեղ են գրաւում երկու պայծառ դէմքեր՝ Ներսէս Մշեցին եւ յայտնի մեկնող, բանաստեղծ եւ քերականագէտ Յովհաննէս Երզնկացին: Նա իր իմաստութեամբ եւ անխոնջ վաստակով այնպիսի մեծ հռչակ է վայելում, որ 1246 թուին Հուլավու էլչանը կանչում է նրան իր մօտ եւ պատւում: Վերադարձին շարունակում է իր գրական–մանկավարժական գործունէութիւնը, մինչեւ իր մահը՝ 1271 թուականը:

Այս վաստակաւոր գրական մշակը հայ մատենագրութեան աւանդ է թողել գրական բազմաթիւ երկեր, որոնցից ամենանշանաւորը «Պատմութիւն տիեզերական»ն է (Մոսկա, 1861 թ.): Ունի նաեւ մեկնութիւններ Երգ Երգոցի, Սաղմոսի, Դանիէլի եւ այլն: Մանր երկերից յիշենք՝ «Յաղագս մեկնութեան քերականին», «Թուղթ... առ Հեթում թագաւորն» եւ ուրիշներ:

Սակայն, մի հանգամանք աւելի արժէքաւորում է նրա պայծառ կերպարը: Իր անունը քանդակուած է նաեւ հայ երաժշտութեան պատմութեան մէջ: Նա իր ձեռքում ո՛չ միայն բարձր է պահում հոգեւոր երաժշտական արուեստի դրօշը, այլեւ հանդիսանում է իր դարաշրջանի երաժշտական դպրոցը զարգացնող վաստակաւոր մշակներից մէկը, եւ ժողովրդի սրտում մնում է պահում երաժշտութեան սէրը: Այդ տեսակէտից նա միջնադարի հայ երաժշտութեան պատմութեան մէջ ունի իր ուրոյն էջը: Նրանից մեզ աւանդ են մնացել երաժշտական որոշ հատուածներ, որոնցից ուշագրաւ են Յովակիմայ եւ Աննայի, Երկոտասան առաքելոց եւ Սահակ–Մեսրոպին (Թարգմանչաց) նուիրուած շարականները, որոնք գրաւիչ են իրենց երաժշտական արուեստի նրբութեամբ, ըղձացմունքի ջերմութեամբ ու գեղեցիկ պատկերաւորութեամբ եւ, որ էականն է, մինչեւ օրս էլ երգւում են: Այդ եղանակների ետեւում ցոլանում է հմուտ եւ ձեւակերպուած լաւագոյն հայ երաժշտագէտը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Ռաշտ, 4 Նոյեմբեր 1954

(*) Պատմութիւն Հայոց Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս 1909, էջ 295: Ար. Եր.

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆԻ

35–ԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Գալիֆոռնիոյ Հայոց Առաջնորդ՝ Գեր. Տ. Շնորհք վրդ. Գալուստեանի հովանաւորութեամբ անցեալ տարի Նոյեմբ. 21ին տօնախմբուած է Ֆրէզնոյի Տամատեան Սրահին մէջ՝ վաստակաւոր դրագէտ ու բանասէր Արամ Երեմեանի 35–ամեայ գրական գործունէութեան Յոբելեանը:

Վաստակաւոր մշակ մը արդարեւ, որ անխոնջ նուիրուած է պրպտելու եւ երեւան հանելու հայ գրչագիրներու անկիւնները, թաքուն գեղեցկութիւններ եւ արժէքներ, միաժամանակ նուիրուած ուսուցչական ասպարէզին եւ նաեւ հանրային գործունէութեան՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

Ծնած Մարզուան 1898–ին, միջնակարգ կրթութիւն ստացած ծննդավայրի Ս. Սահակեան դպրոցը, ապա Կալիֆոռնիայի հայոց «Մարդասիրական» ճեմարանին մէջ՝ հետեւելով բարձրագոյն զարգացման, Վիեննայի համալսարանին մէջ պատմագրական մասնաճիւղին: Այնուհետեւ 1925–էն վերջ մինչեւ 1929 գտնուած Հայաստան եւ պաշտօնավարած պետական Թանգարանի պատմա–գրական բաժնին մէջ: Նոր–Ջուղա, Թեհրան կ'ըլլան յաջորդաբար կարեւոր կեդրոնները իր կրթական եւ ուսուցչական ասպարէզներուն, եւ ներկայիս՝ որպէս Տնօրէն հայկական դպրոցի մը՝ անցած է Ռաշտ, ուր իր բազմաբաղ կեանքին մէջ ձեռքէ չի ձգեր իր բանասիրական աշխատանքները:

Խմբագրական մարզին մէջ իր կարեւոր դերը ունեցած է «Արուեստ» երկամսեայ թերթին համար Երեւանի մէջ, որպէս քննադատ եւ գեղարուեստի սիրահար՝ եւ հրապարակագրութեամբ ծանօթացնող մը՝ գիտելի է իր «Սեւան» երաժշտական ժողովածուն, հրատարակուած Վենետիկ 1927–ին: Նկարչական ժողովածու մըն է, ընդհակառակն, Հայաստանի նկարիչների